

ՍՈՒՐԵՆ ՀՈՐՈՍՅԱՆ ԲՈՐԻՍ ԳԱՍՊԱՐՅԱՆ
ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱՆԻ ՍԱՐԱՏԻԿՅԱՆ ԱՆԺԵԼԱ ԱՄԻՐԻՆՅԱՆ

ԽԱՂՈՂԻ ԵՎ ԳԻՆՈՒ ՀԱՅՈՑ ՄՇԱԿՈՒՅԹԸ





"Gfoeller Renaissance
Foundation" of USA



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



Գիրքը հրատարակվել է
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարության Գիտության կոմիտեի
և «Արենի-1 քարայր» կոնսորցիումի
ֆինանսական աջակցությամբ

The book is published with the financial support of the
Science Committee of the Ministry of Education, Science,
Culture and Sports of the Republic of Armenia
and the «Areni-1 Cave» Consortium

Книга напечатана при финансовой поддержке
Научного комитета Министерства образования, науки,
культуры и спорта Республики Армения
и Консорциума «Пещера Арени-1»

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY
«ARENİ-1 CAVE» CONSORTIUM

SUREN HOBOSYAN, BORIS GASPARYAN,
HASMIK HARUTYUNYAN, ANI SARATIKYAN,
ANZHELA AMIRKHANYAN

ARMENIAN CULTURE OF VINE AND WINE



PUBLISHING HOUSE OF THE INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETNOGRAPHY
YEREVAN
2021

ՀՏԴ 634.8:663.25:39(=19):94(479.25)
ԳՄԴ 42.36+36.87+63.5(5Հ)+63.3(5Հ)
Խ 197

Գիրքը հրատարակության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ
Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտա-
կան խորհուրդը

Խմբագիրներ՝ Արսեն Բոբոխյան, պատմ. գիտ. թեկնածու
Արթուր Պետրոսյան
Editors: Arsen Bobokhyan, PhD in History
Artur Petrosyan
Редакторы: Арсен Бобохян, кандидат ист. наук
Артур Петросян
Գրախոսներ՝ Հայկ Ավետիսյան, պատմ. գիտ. դոկտոր
Սամվել Մկրտչյան, պատմ. գիտ. դոկտոր

Սուրեն Հոբոսյան, Բորիս Գասպարյան, Հասմիկ Հարությունյան, Անի Սարատիկյան,
Անժելա Ամիրխանյան
Suren Hobosyan, Boris Gasparyan, Hasmik Harutyunyan, Ani Saratikyan, Anzhela Amirkhanyan
Сурен Обосян, Борис Гаспарян, Асмик Арутюнян, Ани Саратикян, Анжела Амирханян

Խաղողի և զինու հայոց մշակույթը, Երևան, 2021, 437 էջ
Խ 197 Armenian culture of vine and wine, Yerevan, 2021, 437 pages
Армянская культура винограда и вина, Ереван, 2021, 437 страниц

Խաղողն ու զինին բացառիկ դեր են խաղացել հայ ժողովրդի բազմադարյան պատմության ընթացքում՝ դառնալով նրա ինքնությունը կերտող կարևոր բաղադրիչներից մեկը: Սույն աշխատությունը վերաբերում է Հայկական լեռնաշխարհում խաղողագործության և զինեգործության անցած երկարատև պատմությանը: Առանձին ենթահարցերի քննարկման միջոցով (խաղողագործական գոտիներ, այգի և այգեգործություն, ոռոգում, զինու պատրաստման միջոցներ և պահեստավորում) բացահայտվում է խաղողի ու զինու խաղացած պրակտիկ-տնտեսական և հոգևոր-ծիսական նշանակությունը հայկական կենցաղում և մշակույթում, դրանց արտացոլումները ժողովրդական բանահյուսության, ժողովրդական բժշկության մեջ, ինչպես նաև ուտեստի համակարգում: Մանրամասն քննարկվում են հայկական խաղողի տեսակները և զինու ժողովրդական դրակումները, տրվում է համապատասխան տերմինների ընդարձակ բառարան: Մեծաքանակ փաստագրական նյութով և նկարներով համեմված այս հատորը նախատեսված է ինչպես նեղ մասնագիտական, այնպես էլ՝ մշակույթով ու արվեստով հետաքրքրվող ընթերցող լայն շրջանակների համար:

Grapes and wine have played a unique role in the centuries-old history of the Armenian people, becoming one of the important attributes shaping up its identity. The present monograph reveals the content of the long way of viticulture and wine-making in the Armenian Highlands. The issues highlighted for the respective discussion, more precisely, viticulture zones, orchards and horticulture, irrigation, wine-making instruments and its storage, are meant to dwell on the practical-economic and spiritual-ritualistic significance of grapes and wine in Armenians' every-day life and culture, as well as to cover their reflection in folklore, folk medicine, and diet. The varieties of Armenian grapes and the references of wine in folklore are discussed in further details. The monograph also comprises an extensive dictionary of respective terms. This volume, spiced with a large amount of documentary material and images, is intended for both professionals and a wide range of readers interested in culture and art.

Виноград и вино сыграли уникальную роль в многовековой истории армянского народа, став одним из важных компонентов, формирующих его самобытность. Настоящая монография раскрывает содержание долгого пути виноградарства и виноделия на Армянском нагорье. Обсуждение отдельных вопросов (виноградарские зоны, сады и садоводство, ирригация, технология виноделия и способы хранения вина) реконструирует практическое-экономическое и духовно-ритуальное значение винограда и вина в повседневной жизни и культуре армян, их отражение в фольклоре, народной медицине, а также в системе питания. Подробно рассмотрены виды армянского винограда и народные квалификации вина, дан обширный словарь соответствующих терминов. Эта книга, представленная большим количеством документального материала и рисунками, предназначена как для профессионалов, так и для широкого круга читателей, интересующихся культурой и искусством.

ԱՌԱՋԱԲԱՆ

«Խաղողի և գինու հայոց մշակույթը» հեղինակների հրատարակած՝ Հայաստանի խաղողագործական և գինեգործական բազմադարյան ավանդույթը ներկայացնող երրորդ գիրքն է: Չնայած նախորդ երկու՝ «Գինին հայոց ավանդական մշակույթում» (2005) և «Հայկական խաղող և գինի» (2017) գրքերում ամփոփված է ծավալուն նյութ, այնուհանդերձ, տեղի և ժամանակի սահմանափակության պատճառով, դրանցից դուրս էին մնացել բազմաթիվ արժեքավոր սկզբնաղբյուրներ: Ներկա հրատարակությունը, հիմնվելով նախորդ երկուսի վրա և ընդգրկելով հույժ արժեքավոր նյութեր, ներառել է նաև հայ և օտար գիտնականների վերջին տարիների բացահայտումներն ու ուսումնասիրությունները: Սույն ուսումնասիրության կարևորագույն արժանիքներից է նախորդ երկու դարերի հայ պարբերականներում զետեղված բազմաբովանդակ ու բազմաբնույթ նյութերի հավաքումն ու ներկայացումն ընթերցողին, ինչը գրքի հեղինակների երկարամյա պրպտումների արդյունք է, որը տեղ չի գտել նախորդ հրատարակություններում: Նշված ազգագրական նյութերը՝ դեռևս ամբողջությամբ չմշակված, չհրատարակված ու լիարժեք կերպով չարժևորված սկզբնաղբյուրների հետ, հնարավորություն են ստեղծում նորովի դիտարկել հայոց խաղողագործական ու գինեգործական մշակույթը, վեր հանել նրա ձեռքբերումներն ու թերությունները, դիտարկել դրանք ժամանակի քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային իրողությունների ամբողջական պատկերի մեջ:

Ընթերցողը գրքում կարող է ծանոթանալ խաղողի որթի մասին Հայաստանի տարածքում ապրած հասարակությունների պատկերացումներին, վազն ընտելացնելու, խաղողագործության՝ որպես այգեգործության կարևորագույն ճյուղերից մեկի ձևավորման, կայացման և այգու մշակման հմտություններին: Համառոտ կերպով ներկայացված են Հայաստանի խաղողագործական գոտիներն ու լանդշաֆտները, դրանց կլիմայական-աշխարհագրական առանձնահատկությունները, շահագործման պատմությունը: Առանձին գլուխ է նվիրված Հայաստանի ոռոգման համակարգի պատմությանը՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, քանի որ առանց ջրի և այն կառավարելու գիտելիքների, խաղողագործությունն ու այգեգործությունը մեր երկրում անհնար է կազմակերպել:

Ընթերցողին ներկայացվում է նաև Հայաստանում հնագիտական պեղումներով փաստագրված, ինչպես նաև ազգագրորեն փաստագրված գինու արտադրական համալիրների՝ հնձանների, դրանց կառուցվածքային առանձնահատկությունների, տեղաբաշխման ու շահագործման մանրամասների մասին եղած հանգամանալից տեղեկատվություն: Հաջորդիվ տրվում է գինու պատրաստման տեխնոլոգիաների, արտադրական

ծավալների, պահեստավորման, պահպանության, տեղափոխման, առևտրի և սպառման մասին մեր ունեցած արդի պատկերացումների ընդհանրացումը: Առանձին՝ ոչ պակաս կարևոր մի գլուխ էլ ներկայացնում է խաղողը և գինին հայոց ծեսերում, հավատալիքներում ու բանահյուսության մեջ, որտեղ ընթերցողը կարող է ծանոթանալ դրանց պաշտամունքային բնույթին, ժողովրդական և եկեղեցական ծիսական արարողությունների, տոնախմբությունների ընթացքում օգտագործման մանրամասներին ու խորհրդին, համայնական ու հասարակական բնույթի հացկերույթների ու խնջույքների ընթացքում արտասանված կենաց-մաղթանքներին, գրույցներին, հեքիաթներին, առակներին, ասացվածքներին, խաղիկներին, հանելուկներին ու բանաստեղծություններին: Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում հայկական մատենագրական աղբյուրներում գինու չաքաշահման ու դրա բացասական հետևանքների մասին առկա նյութերը, որոնց մի սովոր մասը չի կորցրել իր արդիականությունը: Գրքում համառոտ անդրադարձ է կատարվել նաև Հայաստանում օդու արտադրության և օգտագործման պատմությանը, որն ուղեկցել է գինուն, որպես նրա արտադրության երկրորդային մթերք:

Գիրքը եզրափակում են խաղողի՝ հայոց ուտեստի համակարգում ունեցած տեղի և կիրառության, գինու և նրա վերամշակման արդյունքում ստացվող մթերքի բուժական հատկությունների, ժողովրդական բժշկության մեջ ունեցած դերն ու նշանակությունը: Եվ վերջապես, առանձին ցուցակով բերված են XIX դ. հայկական խաղողի տեսակները և գինու ժողովրդական որակումները, որոնց ժողովուրդը նմանեցրել է իրեն ծանոթ կենդանիներին, թռչուններին, բույսերին, գույներին, համերին և այլն: Գիրքը եզրափակվում է հայերենի բարբառներում առկա՝ խաղողին ու գինուն առնչվող անվանումների բառարանով:

Ընդհանուր առմամբ գրքում ընդգրկված նյութերն ու գրականության ցանկն այնքան լայն են, որ կարող են հիմք հանդիսանալ նոր և ավելի խորքային ուսումնասիրությունների և հրատարակությունների համար:

Ինչպես ցանկացած արժեքավոր ձեռնարկում, այնպես էլ ներկայացվող գրքի լույս աշխարհ գալու պատիվը չի կարող բաժանվել միայն հեղինակների միջև: Գրքի ստեղծմանը նպաստել են բազմաթիվ կազմակերպություններ և անհատներ, առանց որոնց աջակցության և գործուն մասնակցության այն չէր կարող հասցվել ցանկալի մակարդակի: Գրքում ունեցած՝ առաջին հայացքից չերևացող ներդրումը ցանկանում ենք վերածել հեղինակային խմբի անունից արտահայտվող խորին շնորհակալության: Հեղինակների խումբը ցանկանում է իր առանձնակի շնորհակալությունը հայտնել գրքի համակարգչային ձևավորումն իրականացրած Անահիտ Գալստյանին, որին, առանց չափազանցության, կարելի է գրքի հեղինակ համարել: Առանձնակի օժանդակություն են ցույց տվել գրքի խմբագիրներ Արսեն Բոբոխյանն ու Արթուր Պետրոսյանը, որոնք արել են շատ ավելին, քան միայն խմբագրի ստանձնած պարտականություններն են: Գրքի կազմման աշխատանքներին աջակցել են նաև Արենի-1 կոնսորցիումի բազմաթիվ աշխատակիցներ:

Հեղինակները հատուկ շնորհակալություն են հայտնում Ջարուհի Սիրադեղյանին և Տիգրան Միքայելյանին, որոնց ջանքերով թարգմանվել և խմբագրվել են գրքի ռուսերեն և անգլերեն ամփոփումները: Խորին շնորհակալություն մեր գործընկերներ Միքայել Բադալյանին, Հայկուհի Սահակյանին, Արմինե Սարգսյանին, Սվետլանա Պողոսյանին, Արմինե Զոհրաբյանին և հայաստանյան թանգարանների այն բոլոր աշխատակիցներին, որոնք արխիվային նյութեր են տրամադրել: Շնորհակալություն ենք հայտնում մեր իտալացի վաղեմի բարեկամ Ֆիլիպո Դուցիոնիին, ճապոնացի գործընկեր Մակոտո Արիմուրաին, չեխ գործընկեր Յան Ֆրոլիկին, ՀՀ ԿԳՄՍ նախարարության աշխատակազմի ՊՄՀՊ վարչության բաժնի պետ Կարեն Բայրամյանին և նախարարության մասնագետ Լևոն Մկրտչյանին, անվանի գրող Վահան Զանոյանին: Գործնականում անհնար է թվարկել այն բոլոր գործընկերների անունները, որոնք իրենց խորհուրդներով ու արժեքավոր դիտողություններով նպաստել են գրքի ստեղծմանը: Հայցում ենք նրանց ներողամտությունը: Եվ վերջապես, հարգելի ընթերցող, շնորհակալություն ենք ուզում հայտնել նաև քեզ: Չէ՛ որ հեղինակ ես նաև դու, քանզի ամեն անհատ գիրքն ընկալում ու մեկնաբանում է յուրովի:

Առանձնակի շնորհակալության ու երախտագիտության են արժանի նաև այն անհատները, որոնց լուսանկարներն ու գրչանկարները օգտագործվել են գրքում: Նրանք են՝ Դմիտրի Առաքելյանը, Արսեն Բոբոխյանը, Արթուր Պետրոսյանը, Սուրեն Քեսեջյանը, Մարինա Դավաթյանը, Նելլի Հովհաննիսյանը, Ռուբեն Բադալյանը, Հայկ Հայդոսյանը, Հայկ Ազիզբեկյանը, Դիանա Միրիջանյանը, Տեր Սահակ քահանա Մարտիրոսյանը, Հրայր Բազեն, Զավեն Սարգսյանը, Միրյո Սալվինին և Ռոբերտո Դանը (լուսանկարներ), Մոսե Ադայանը, Արտակ Հախվերդյանը, Լիլիթ Տեր-Մինասյանը, Անի Սահակյանը, Վահե Առաքելյանը, Ռուբեն Սարգսյանը, Յիրի Շինդելաուր (գրչանկարներ, գծագրեր, եռաչափ վերակազմություններ):

Գիրքը իրականություն չէր դառնա, եթե չլիներ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Գիտության կոմիտեի դրամաշնորհը (ծածկագիր՝ 18T-6A221) և Ամերիկայի «Գֆոելլեր» հիմնադրամ-ընկերության տրամադրած ֆինանսական աջակցությունը: Ուզում ենք մեր հատուկ շնորհակալությունը հայտնել հիմնադրամի նախագահ Մայքլ Գֆոելլերին:

Խաղողի մշակությունն ու գինու արտադրությունն այժմ էլ կարևոր տնտեսական նշանակություն ունեն Հայաստանի Հանրապետության համար, սակայն, չնայած այս իրողությանը, խաղողի այգիները չեն ընդարձակվում: Որոշակի զարգացում է նկատվում թերևս միայն Վայոց ձորի մարզում, շնորհիվ մի քանի գործոնների: Դրանցից կարևորագույնն անշուշտ խաղողի Արենի աբորիգեն սորտն է, որն Արփա գետի հովտում մշակվում է առնվազն հազար տարի: Հազարամյակների ընթացքում ձևավորված ժողովրդական հմտությունների և գինեգործության արդի տեխնոլոգիաների համադրության արդյունքում արտադրվող «Արենի» գինիների պահանջարկը համաշխարհային շուկայում աստիճանաբար մեծանում է: Այս խաղողի և գինու հիմնական «գաղտնիքը» Վայոց ձորի բնակլիմայական պայմաններից բացի, պատմաշխարհագրական և մշակութային միջա-

վայրն է՝ լերկ լեռներ, հրակարմիր ժայռեր ու խանձված լանջեր, որոնց վրա տարագույն կարկատանների նման շարված են այգիները, երբեմն ավելի հին, քան շրջապատի շեները, ամրոցները, վանքերն ու կամուրջները:

Արենի անունը ավելի հնչեղ դարձավ վերջին տարիներին նույնանուն քարանձավում հայտնաբերված աշխարհի հնագույն հնձանով, և ով իմանա, գուցե շնորհիվ այդ հնձանի առագաստում բոքիկ ոտքերով խաղող տրորող գինեգործի կաշվե կոշիկի, Գինիշիկաձորում հնագիտական պեղումներով հայտնաբերված համալիրով, նրա շրջակա լանջերին պահպանված դարավանդային այգիների հետքերով, կողք-կողքի աճող մշակովի և վայրի խաղողենիներով:

Մշակութային միջավայրի արդյունավետ օգտագործման հրաշալի հնարավորություն կա հատկապես մայրաքաղաք Երևանում՝ Կարմիր բլուրում և Դալմայի այգիներում, որոնք դեռևս գոյատևում են, հիմնահատակ չեն ոչնչացվել: Այգին հիմնվել է հավանաբար Վանի թագավորության դարաշրջանում: Դեռևս նշմարվում են հայկական ավանդական թմբային այգիների հետքերը, դեռևս ամբողջովին չեն խոնարհվել շուրջ երկու տասնյակ հնձանները, որոնք XVI-XIX դդ. ուրույն ոճի ճարտարապետական հուշարձաններ են: Պետական հատուկ ծրագրով անհրաժեշտ է Դալմայի այգիների տարածքում ստեղծել «ԽԱՂՈՂԻ ԵՎ ԳԻՆՈՒ ԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ», իր այգիներով, հնձաններով, մառաններով, գինու մատուցման ու համտեսի ազգային եղանակներով, ծեսերով ու արարողություններով:

Հայոց խաղողագործական ու գինեգործական ներուժը լավագույնս օգտագործելու միջոցներից է այն ներկայացնող միավորների ներառումը զբոսաշրջային ծրագրերում: Մշակութային միջավայրի արդյունավետ օգտագործման հրաշալի հնարավորություններ կան Արագածոտնի և Կոտայքի մարզերում, որտեղ խաղողի մշակման գոտին ձգվում է Աշնակ գյուղից մինչև Գառնի: Հնագիտական պեղումներով հնձաններ են հայտնաբերվել Աշնակում, Ագարակում, Աշտարակում, Եղվարդում, Առինջում, Գառնիում: Հաշվի առնելով այս տարածքի պատմամշակութային հարստություններն ու գինեգործության ավանդույթները, հարկավոր է վերականգնել ավանդական այգիների մի մասն ու ավանդական եղանակներով գինու արտադրությունը: Հյուսիսարևելյան խաղողագործական գոտում նման մշակութային տարածքը ձգվում է Քոբայրից մինչև Խորանաշատ՝ Իգահատի միջնադարյան այգիներ, Շնող, Բերդավան, Կոթի, Վազաշեն, Պառավաքար, Այգեձոր ու Չինարի: Սյունիքում յուրահատուկ մշակութային տարածք է Շվանիձոր-Մեղրի-Կարճևան խաղողագործական գոտին՝ ժայռերի վրա գտնվող այգիների պատառիկներով: Նշված տարածքներում խաղողի և գինու զբոսաշրջության կազմակերպումը հնարավորություն կտա նաև փրկել դրանք վերջնական ոչնչացումից ու նոր կյանք կհաղորդի հնամենի այգիներին ու հնագիտական հուշարձաններին:

Այսօր, մեր ժողովրդի համար այս դժնդակ ժամանակներում, հազարամյակների խորքից եկող հայոց խաղողագործական ու գինեգործական ավանդույթները երկրի տնտեսության աշխուժացման կարևորագույն խթանների շարքում են: Հայ ժողովուրդն իր գոյության ընթացքում ահռելի ներդրում է ունեցել համաշխարհային քաղաքակրթության մեջ, հատկապես ներկայացված ոլորտներում, որը դեռևս ըստ արժանվույն չի գնահատվել:

ԽԱՂՈՂԻ ԵՎ ԳԻՆՈՒ ՀԱՅՈՑ ՄՇԱԿՈՒՅԹԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ.....	7
ԳԼՈՒԽ I. ԽԱՂՈՂԻ ՈՐԹ.....	11
ԳԼՈՒԽ II. ԱՅԳՈՒ ՀԻՄՆՈՒՄ	19
ԳԼՈՒԽ III. ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ.....	35
ԳԼՈՒԽ IV. ԽԱՂՈՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐ.....	44
ԳԼՈՒԽ V. ՈՌՈԳՈՒՄ	50
ԳԼՈՒԽ VI. ՀՆՁԱՆ	63
ԳԼՈՒԽ VII. ԳԻՆԻ	73
ԳԼՈՒԽ VIII. ԽԱՂՈՂՆ ՈՒ ԳԻՆԻՆ ԾԵՍԵՐՈՒՄ, ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐՈՒՄ ԵՎ ԲԱ- ՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ.....	88
ԳԼՈՒԽ IX. ՕՂԻ	100
ԳԼՈՒԽ X. ԽԱՂՈՂՆ ՈՒՏԵՍՏՈՒՄ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ.....	105
ԳԼՈՒԽ XI. XIX Դ. ՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂՈՂԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԻՆՈՒ ԺՈՂՈՎՐԴԱ- ԿԱՆ ՈՐԱԿՈՒՄՆԵՐԸ.....	112
ԲԱՌԱՐԱՆ.....	122
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	130
ԱՄՓՈՓՈՒՄ	153
ՆԿԱՐՆԵՐ.....	177

ARMENIAN CULTURE OF VINE AND WINE

CONTENTS

FOREWORD.....	7
CHAPTER I. GRAPEVINE	11
CHAPTER II. GARDEN ESTABLISHMENT	19
CHAPTER III. VITICULTURE	35
CHAPTER IV. WINEMAKING AREAS	44
CHAPTER V. IRRIGATION.....	50
CHAPTER VI. WINEPRESS	63
CHAPTER VII. WINE.....	73
CHAPTER VIII. GRAPES AND WINE IN RITES, BELIEFS AND FOLKLORE	88
CHAPTER IX. VODKA	100
CHAPTER X. GRAPES IN DIET AND FOLK MEDICINE	105
CHAPTER XI. ARMENIAN GRAPE TYPES AND FOLK QUALIFICATIONS OF WINE IN THE XIX CENTURY	112
DICTIONARY	122
BIBLIOGRAPHY	130
SUMMARY	153
ILLUSTRATIONS	177

АРМЯНСКАЯ КУЛЬТУРА ВИНОГРАДА И ВИНА

СОДЕРЖАНИЕ

ПРЕДИСЛОВИЕ	7
ГЛАВА I. ВИНОГРАДНАЯ ЛОЗА.....	11
ГЛАВА II. ЗАКЛАДКА САДА.....	19
ГЛАВА III. САДОВОДСТВО	35
ГЛАВА IV. ВИНОГРАДАРСКИЕ ПОЯСА	44
ГЛАВА V. ОРОШЕНИЕ	50
ГЛАВА VI. ДАВИЛЬНЯ.....	63
ГЛАВА VII. ВИНО	73
ГЛАВА VIII. ВИНОГРАД И ВИНО В ОБРЯДАХ, ПОВЕРЬЯХ И ФОЛЬКЛОРЕ	88
ГЛАВА IX. ВОДКА	100
ГЛАВА X. ВИНОГРАД В ПИЩЕ И НАРОДНОЙ МЕДИЦИНЕ	105
ГЛАВА XI. ВИДЫ АРМЯНСКОГО ВИНОГРАДА XIX В. И НАРОДНЫЕ КВАЛИФИКАЦИИ ВИНА	112
СЛОВАРЬ	122
ЛИТЕРАТУРА	130
РЕЗЮМЕ.....	153
ИЛЛЮСТРАЦИИ	177

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայկական լեռնաշխարհի ու հարևան տարածքների հնագիտական հուշարձաններից հայտնաբերված վայրի և մշակովի խաղողենու մնացորդները, գինու արտադրական կառույցները հաստատում են այդտեղ խաղողի ընտելացման և գինեգործության հնագույն օջախի գոյության մասին: Հայաստանը հնագույն այգեգործական երկրներից է, նրա մի շարք շրջաններում, մասնավորապես Եփրատի, Տիգրիսի և Արաքսի բարեբեր հովիտներում այգեմշակությամբ զբաղվել են առնվազն պոլինձկարի դարից՝ Ք.ա. V հազ. վերջերից:

Հայոց տնտեսական ու հոգևոր կյանքի բազմազանությունը պայմանավորված է երկրի ռելիեֆի խիստ արտահայտված գոտիականությամբ: Հայաստանի տարածքում առկա է բնական լանդշաֆտների յուրացման երեք գոտի՝ հարթավայրային (ցածրադիր), նախալեռնային (միջին) և լեռնային (բարձրադիր): Աշխարհագրական պայմաններով թելադրված՝ այս ուղղահայաց գոտիականությունը ձևավորել է երկրի տնտեսության ու մշակութային զարգացման ողջ ընթացքը: Խաղողագործության համար նպաստավոր են եղել հիմնականում ցածրադիր և նախալեռնային գոտիները:

Վաղը Հայաստանում աճում է գրեթե ամեն տեղ, վայրի խաղողը՝ ծառերին փաթաթված կամ ժայռերին մագլցած, մինչ օրս հանդիպում է Արցախում, Սյունիքում, Վայոց ձորում, Լոռիում, Տավուշում և այլ վայրերում:

Հայկական լեռնաշխարհի բնակլիմայական պայմաններն ու վայրի խաղողի առկայությունը նպաստել են խաղողագործության և գինեգործության ձևավորմանն ու զարգացմանը, որի վկայությունն են երկրի տարածքում առաջացած շուրջ 500 աբորիգեն սորտերը: Դրանք օժտված են շատ բարձր որակական հատկանիշներով և տվյալ վայրին բնորոշ կենսաբանական առանձնահատկություններով:

Հայերենում խաղողի թուփը հայտնի է որթ, որթատունկ, վագ, խաղողենի, մովրաշուք, աղօղ ձևերով: Հայերեն «այգի» բառն արդի հասկացությամբ նշանակում է խաղողի վազեր և պտղատու ծառեր տնկած հողամաս, սակայն բառի նախնական իմաստը որոշակիորեն նշանակել է միայն խաղողի այգի: Այգուն ու այգեգործությանը վերաբերող ավելի քան հարյուր յուրահատուկ տերմիններ (որթ, սորեկ, խաղող, հնձան) կան դեռևս հայերեն առաջին գրքում՝ Աստվածաշնչում: Այգի և այդ բառի բարբառային արմատներով բազմաթիվ տեղանուններ կան պատմական Հայաստանի տարբեր շրջաններում:

Վանի թագավորության շրջանի սեպագիր արձանագրությունները հիշատակում են խաղողի այգիներ հիմնելու, գինու մառաններ կառուցելու և տնտեսական այլ գործարքների մասին: Հայաստանի պատմության այդ շրջանին է վերաբերում ոռոգման հզոր ցանցի և արհեստական ջրամբարների ստեղծումը: Ք.ա. VIII դ., Արգիշտի I արքայի իշխանության տարիներին, խաղողագործությունը դարձավ երկրի տնտեսության կարևորագույն ճյուղերից մեկը:

Հայաստանի քաղաքները՝ Վանը, Երվանդակերտը, Արմավիրը, Արտաշատը, Տիգրանակերտը, Դվինն ու Վաղարշապատը շրջապատված են եղել երկրագործական գոտիներով, այդ թվում՝ հնձաններ ունեցող այգիներով: Այգեգործական գոտու առկայությունը հայկական քաղաքի ամենակարևոր առանձնահատկություններից էր: Այն բնորոշ է եղել այս տարածքի բոլոր հասարակություններին և հատկապես Վանի թագավորությանն ու հելլենիստական դարաշրջաններին՝ դառնալով էթնիկ ինքնության առանցքային տարր: Այս մասին հետաքրքիր վկայություններ են պահպանվել Հերոդոտոսի, Քսենոֆոնի և Ստրաբոնի աշխատություններում:

Հայաստանում խաղողագործությունն ու գինեգործությունը զգալի զարգացում ունեցան նաև միջնադարում, ինչի մասին վկայում են հնագիտական պեղումներն ու գրավոր աղբյուրները: Այգիների, գինեգործության ու գինու մասին մեծ թվով վկայություններ կան հայ պատմիչների երկերում, վիմագիր արձանագրություններում:

Տնտեսության այս ճյուղի զարգացման գործում մեծ տեղ ունեն հայ եկեղեցին: Գրեթե բոլոր վանքերն ու նշանավոր եկեղեցիներն այգիներ և հնձաններ ունեին:

Հայկական ավանդական այս տնտեսաձևի համար կործանարար ազդեցություն ունեցան վաչկատուն տարբեր ցեղերի ասպատակություններն ու նվաճումները, որոնց արդյունքում ավերվում և ամայանում էին նաև այգիները: Հատկապես կործանարար էին մահմեդականների նվաճումներն ու կրոնական արգելքները, որոնց հետևանքով խիստ կրճատվեցին նաև խաղողի այգիները:

Հայաստանում ավանդաբար եղել է վազ տնկելու և այգի ձևավորելու մի քանի եղանակ: Այգիների գերակշիռ մասը մշակվել է թմբային եղանակով, Արցախում, Տավուշում և Լոռիում տարածված են եղել ծառերին փաթաթվող և հենակային, իսկ Մեղրիում՝ նաև լարային եղանակները: Թմբային սիստեմը լիովին հարմարեցված էր մեր երկրի բնապատմական և տնտեսական պայմաններին և լարայինի նկատմամբ ուներ մի քանի էական առավելություն, քանի որ հատկապես սակավաջուր Հայաստանի պայմաններում շատ կարևոր էր ջրի խնայողությունն ու ռացիոնալ օգտագործումը:

Այգիները վաղ զարնանից մինչև ուշ աշուն մեծ խնամք են պահանջում: Արարատյան դաշտում և նախալեռնային գոտում զարնան առաջին գործն այգեբացն էր, խաղողի որթը բանալը: Այգեբացին հաջորդում էր էտը, որը վազի բերքատվության և աճի հարաբերակցության կարգավորման ամենակարևոր միջոցն էր: Էտը պատասխանատու աշխատանք էր, էտվորը պետք է լինեք փորձված այգեգործ: Էտից հետո այգին փորում, փխրեցնում էին: Այգին փորելը խնամքի պարտադիր աշխատանքներից էր, քանի որ

փխրեցրած հողի մեջ ջուրն ու օդն ավելի լավ են թափանցում, ավելի շատ խոնավություն է պահպանվում, ոչնչանում են մոլախոտերի արմատները:

Ելնելով տնտեսության հնարավորություններից՝ այգու պարարտացումը կատարվում էր աստիճանաբար: Այն բաժանում էին առանձին տեղամասերի ու հերթով պարարտացնում, ամեն տարի՝ մեկ տեղամաս: Ծաղկած վազի ողկույզների վրա դնում էին վայրի խաղողի (կռեկ) ծաղիկներ, որի շնորհիվ առողջ ու առատ բերք էին ստանում: Խաղողի որթը վայրի տեսակով փոշոտելու եղանակը հավանաբար սկիզբ է առել այգեգործի դիտողականության, փորձի ու հմտության արդյունքում: Խաղողի վնասատուների ու հիվանդությունների մասին հետաքրքիր տեղեկություններ է հիշատակում XII դ. կաթողիկոս Ներսես Շնորհալին:

Բերքահավաքը կամ այգեկուրն սկսելու կարևորագույն պայմանները խաղողի հասունության աստիճանը և նպաստավոր եղանակն էին: Ավանդաբար պտղի հասունության որոշման ժողովրդական պարզունակ ձևը համոտեսն է եղել, քաղցրության առկայությունը, որը խաբուսիկ էր:

Արարատյան դաշտում ձմեռային ցրտահարումները սովորական երևույթ են, այդ իսկ պատճառով հոկտեմբերի կեսերին խաղողի այգիները հողում թաղում էին: Եթե բերքահավաքից առաջ այն չէին ջրել, թաղելուց առաջ էին ջրում, որպեսզի վազը ճկուն լիներ, հողը՝ փափուկ:

Հայաստանի ավանդական խաղողագործական գոտիներն են Արարատյան դաշտը (Հայաստանի հիմնական խաղողագործական գոտին է, գտնվում է Արաքս գետի միջին հոսանքում, ընդգրկում է Արարատի և Արմավիրի մարզերի 830-1300 մ բարձրության տարածքները), Արարատյան դաշտին հարող նախալեռնային գոտին (ընդգրկում է Արագածոտնի մարզի Աշտարակի, Թալինի և Կոտայքի մարզի 950-1500 մ բարձր տարածքները), Հյուսիսարևելյան տարածաշրջանը (ընդգրկում է Տավուշի մարզի Նոյեմբերյանի, Իջևանի, Բերդի ու Լոռու մարզի Թումանյանի 500-1000 մ բարձրության տարածքները), Վայոց ձորը (ընդգրկում է Եղեգնաձորն ու Վայքը, որտեղ խաղողագործությունը ներառում է 1000-ից մինչև 1700 մ բարձրության վրա գտնվող տարածքները), Սյունիքը (այգիները գտնվում են 260-1700 մ բարձրության վրա), Արցախը և Նախիջևանը:

Հայաստանում երկրագործությունը զարգացել է արհեստական ոռոգման շնորհիվ, օգտագործվել են հատկապես լեռնագանգվածների ձնհալի ջրերը: Դեռևս Ք.ա. V-III հազ. այս տարածքում ապրող մարդը, բարձր գնահատելով կենսապահովման համակարգում ջրի ունեցած աննախադեպ կարևոր նշանակությունը, լեռնալանջերի բնական գոգավորություններում ու լեռների ստորոտներում փոքր ջրամբարներ է կառուցել, դրանք միացրել առվակներով և ջուր ամբարել:

Հնագույն ժամանակներից Հայկական լեռնաշխարհում ստեղծվել է ոռոգման հզոր համակարգ, որպեսզի կանոնավոր կերպով օգտագործվի երկրում եղած ջրի ողջ պաշարը: Արագածի վրա և Գեղամա լեռներում շահագործվել է ջրանցքների ու ջրամբարների մի համակարգ, որի աղբյուրը ձյան հսկայական պաշարն էր: Ոռոգման հնագույն համակարգի ուշագրավ նմուշներ են պահպանվել Արագածոտնի, Սյունիքի, Արցախի, Վայոց

ձորի և Հայաստանի այլ տարածքներում, որտեղ հայտնաբերվել են նաև ջրաբաշխական քարտեզ կամ սխեմա հիշեցնող փորագրված քարեր: Պատահական չէ, որ ջրի պաշտամունքն առանձնահատուկ տեղ է ունեցել հայոց հավատալիքներում. պաշտվել են ջրային տարերքը, գետերը սնուցող լեռներն ու ջրերի ակունքները:

Հայկական լեռնաշխարհում ոռոգման համակարգի ձևավորումն ու զարգացումն իր ծաղկման գագաթնակետին հասավ Վանի թագավորության շրջանում: Այս շրջանի ամենանշանավոր հուշարձաններից է Մենուա I արքայի կառուցած, Տուշպայի գրեթե 80 կիլոմետրանոց ջրանցքը: Կարևոր են եղել նաև Դալմայի, Էջմիածնի (Ումեշինի), Սարդարապատի ջրանցքները, որոնք ոռոգել են ահեղի չափերի հասնող այգեգործական տարածքներ: Վանի տիրակալները և նրանց տիրապետության տակ գտնվող կառավարիչները կարգավորում էին իրենց կողմից ղեկավարվող վարչական միավորների, նստավայրերի ու պալատների ջրամատակարարումը, որի փայլուն օրինակներ են Էրեբունու, Արգիշտիխինիլիի, Ռուսախինիլիի մոտակայքում կառուցված արհեստական ջրամբարները:

Գյուղատնտեսական աշխատանքները կազմակերպելու նպատակով օգտագործվում էին Արաքս, Հրազդան, Քասախ, Արփա, Որոտան, Դեբեդ և այլ գետերի ու դրանց բազմաթիվ վտակների ջրերը, որոնց հոսքաբաժինը կառավարելու շնորհիվ ստեղծվել էր ոռոգման հզոր ցանց: Այն մեծ ու փոքր ջրանցքների ու ջրամբարների մի կուռ համակարգ էր:

Հայաստանում երկրագործական զարգացած մշակույթի ավանդույթները շարունակվել են նաև հետագայում, ոռոգման շատ համակարգեր պահպանվել ու գործարկվել են դարեդար, կառուցվել նորերը: Վիմագրերում հողի և այգու հետ նշվում է նաև ոռոգման ջրի նվիրատվության մասին: Ցածրադիր տաք գոտում հող ասելով նկատի ունենին ոռոգվող տարածքը, քանի որ անջրդի հողերը նույնիսկ որպես արոտներ պիտանի չէին: Այն վայրերում, որտեղ ջուրը բավարարում էր, ըստ ավանդական կարգի, այգիները ջրում էին այգին բացելուց առաջ, վազի փոշոտումից հետո, այգեկութից և այգին թաղելուց առաջ: Զրի դերն այնքան է կարևորվել, որ առանձին համայնքների կամ անհատների հողային կարողությունը չափվել է ոչ թե տարածքով, այլ ջրի քանակի իրավունքով:

Հայաստանի Հանրապետության ամենամեծ ջրային պաշարի՝ Սևանա լճի օգտագործումը ոռոգման նպատակներով ևս եղել է մշտապես քննարկվող հարց, սակայն առաջարկված բոլոր նախագծերը մինչև խորհրդային իշխանությունը գործնական շարունակություն չեն ունեցել: Խորհրդային տարիներին Հայաստանում վերանորոգվեցին ու շահագործման հանձնվեցին բազմաթիվ նոր ջրանցքներ, կառուցվեցին ջրամբարներ ու հիդրոէլեկտրակայաններ, որի շնորհիվ 1989 թ. ոռոգելի հողերի տարածքը 1920 թ. 61 000-ի դիմաց կազմեց 317 100 հա:

Ըստ ժողովրդական ավանդության, հայկական գինու պատմությունն սկսվում է այն պահից, երբ Նոյ նահապետն Արարատ լեռան լանջին տնկեց խաղողի առաջին որթը: Նոյի, Արարատի, տապանի, խաղողի ու գինու շուրջը հյուսվող պատմություններն ավարտ չունեն, դրանք հավերժական են, ինչպես Արարատը, խաղողը և գինին:

«Գինի» բառը սերում է հնդեվրոպական նախալեզվից և խոր հնադարից սկսած ունեցել է տարածման խիստ լայն արեալ: Գինին բնիկ հայերեն բառ է, որով ի սկզբանե բնորոշել են խաղողի հյութի խմորումից ստացված ալկոհոլ պարունակող ըմպելիքը:

Հայաստանի տարածքում հայտնաբերված հնագույն հնձանը գտնվում է Վայոց ձորի մարզի Արենի գյուղի մոտ, Արփա գետի ձախափնյա Արենի-1 քարանձավում: Ք.ա. V հազ. վերջին և Ք.ա. IV հազ. առաջին քառորդով հասակագրված շերտում 2007 թ. պեղվել է գինու արտադրական համալիր՝ խաղողի տրորման հարթակով և տարբեր չափի ու ձևի կարասներով: Պեղված արտադրական համալիրը հնագույն և լավագույնս պահպանված հուշարձանն է, որն այս տարածքում գինեգործության 6000-ամյա ավանդույթի վկայությունն է:

Երևանի տարածքում գտնվող ուրարտական Կարմիր բլուր ամրոցի միջնաբերդում (Ք.ա. VII դ.) հնձաններն ու մառանները կազմել են տնտեսական համալիրների մի մասը, որոնք գտնվել են նաև պալատի նկուղային հարկերում: Կարմիր բլուրի պեղումների ժամանակ հայտնաբերվել են նաև հայկական աբորիգեն Ոսկեհատ, Մսխալի, Արարատի, Նազելի սորտերին նմանվող ածխացած կորիզներ: Կարմիր բլուրի միայն երկու մառաններում, ըստ կարասների տարողության նշանների, պահվել է շուրջ 150 000 լ գինի:

Վանի թագավորության շրջանում ձևավորված խաղողագործության և գինեգործության ավանդույթները շարունակվեցին նաև հետագայում: Երվանդյան դինաստիայի տիրակալները, նոր քաղաքներ ու ջրանցքներ կառուցելով, շարունակում են հնուց եկած ավանդույթը: Հայկական լեռնաշխարհի տարբեր հատվածներում պեղված հուշարձանների տնտեսական համալիրներում իրենց ուրույն տեղն ունեին հնձանները, որոնք կառուցվում էին բնակավայրերում և խաղողի այգիներում: Այգեգործության համար նպաստավոր պայմաններ ունեցող շրջաններում ձևավորվում էին զուտ գինեգործական բնակավայրեր ու համայնքներ, գինեգործությունը դառնում է տնտեսության ինքնավար, մասնագիտացված ճյուղ:

Միջին դարերում գյուղատնտեսական մթերքների վերամշակման զանազան կառույցների, այդ թվում նաև հնձանների մի մասը պատկանել է աշխարհիկ ու հոգևոր հաստատություններին: Թագավորները, իշխաններն ու մեծահարուստները վանքերին ու եկեղեցիներին էին նվիրում այգիներ, վարելահողեր, հնձաններ, ջրաղացներ, ձիթհաններ և այլ եկամտաբեր հաստատություններ: Որպես սեփականատեր, վանական խոշոր միաբանություններն այգիներ ու հնձաններ են ունեցել երկրի տարբեր շրջաններում: Հնագիտական և ազգագրական նյութերը վկայում են, որ դրանք գտնվել են այգիներում, բնակելի տներին կից և եկեղեցական համալիրներում: Ըստ ազգագրական նյութերի, մինչև XIX դ. կեսերն Արարատյան դաշտում, Արագածոտնում, Վայոց ձորում, Արցախում, Լոռիում, Տավուշում և խաղողագործական այլ տարածքներում հնձանները հիմնականում գտնվել են այգիներում: Դրանք ունեցել են նաև բնակելի հատված, որտեղ զարնան և ամռան ամիսներին ապրել է այգու տիրոջ ընտանիքը:

XIX դ. երկրորդ կեսից գինու արտադրական կառույցներն այգիներից տեղափոխում են բնակավայր և կառուցում տան կիսանկուղային հարկում: XX դ. սկզբին և հատկապես

խորհրդային տարիներին, գինու արտադրության ծավալների և տնտեսությունը վարելու եղանակների փոփոխության արդյունքում ի հայտ են գալիս համայնքային բնույթի մեծ հնձաններ, որոնք հետագայում դարձան գործարաններ:

Հայաստանի խորհրդայնացումից հետո գինի և կոնյակ արտադրող բոլոր մասնավոր գործարանները պետականացվեցին, ստեղծվեց «Արարատ» տրեստը, որի բարձրորակ կոնյակներն ու աղանդերային գինիները լայն ճանաչման արժանացան համաշխարհային շուկայում:

Խորհրդային Միության քայքայումից հետո գինու արտադրությունը Հայաստանում խիստ կրճատվեց: Վերջին տասնամյակներում գինու գործարանները, չնայած տնտեսական դժվարություններին, աստիճանաբար դուրս են գալիս միջազգային ասպարեզ և ընդլայնում արտադրական ծավալները՝ ոչ միայն պահպանելով հայկական գինու արտադրության ավանդական եղանակները, այլև յուրացնելով ժամանակակից տեխնոլոգիաներն ու չափանիշները: Այսուհանդերձ, գինեգործության ժողովրդական ավանդույթները շարունակվում են նաև այժմ: Վայոց ձորի, Արագածոտնի, Տավուշի, Սյունիքի և այլ մարզերում նոր, մրցակցային պայմաններում, թելադրված նաև պահանջարկի կանոններով, համադրելով պապերից ժառանգած հմտություններն ու արդի տեխնիկական հնարավորությունները, շարունակվում է տնական գինու արտադրությունը:

Պատրաստի գինին պահել են գետնափոր մառաններում և հնձաններին կից կառուցվող գինետներում: Հնարավորություն լինելու դեպքում դրանք կառուցում էին ժայռի մեջ, որտեղ ողջ տարին ջերմությունը գրեթե չէր փոխվում: Տեղական ավանդույթները շարունակվել են հազարամյակներ ու իրենց արտահայտությունը գտել նաև գինու կարասների ու մառաններում դրանց դասավորության ձևերի մեջ: Երևանի և շրջակա գյուղերի կարասները հիշեցնում են Կարմիր բլուրում պեղված հանրահայտ անոթները, իսկ մայրաքաղաք Դվինի VI-VII դդ. կարասները նման են Շահումյան գյուղում արտադրվածներին: Կարասները ծառայել են քաղցուի հասունացման և պատրաստի գինին պահելու համար:

Գինու որակի և հատկությունների պահպանությունը պահանջում է որոշակի խնամք և հմտություններ, քանի որ այն ևս փչանալու՝ «հիվանդանալու» հակում ունի: Գինին երկար և անվտանգ պահպանելու կարևորագույն երաշխիքներից մեկը կարասի մաքրությունն էր: Գինի լցնելուց առաջ կարասի մեջ խունկ էին ծխում, վարդի ձեթով օծում ու աղաջրով ցողում: Կարասները, մինչև գինի լցնելը, պատում էին մեղրամոմի բարակ շերտով: Բացի կարասից, գինին պահվել է կավե, փայտե, կաշվե և ապակե տարբեր տարողության ամաններում: Արևելքի շատ երկրներում, ինչպես նաև Հայաստանում գինին պահել են այժի կամ ոչխարի տկերում:

Պատմական Հայաստանում գինու առօրյա օգտագործման մասին են վկայում պեղումներով հայտնաբերված տարաբնույթ անոթները: Կատարման տեխնիկայով, ձևերով ու չափերով իրարից տարբերվող գինու կարասները, սափորները, գավերը, տափաշները, գավաթներն ու բաժակները վկայում են տարբեր դարաշրջաններում խեցեգործության զարգացման բարձր աստիճանի մասին: Գինի տեղափոխելու և մատուցելու ամե-

նատարածված ամաններից էր կուժը: Այս նպատակով օգտագործվում էր նաև ջրդդումը, որը տնկում էին այգիների կամ բանջարանոցների եզրերին: Ջրդդումի հասունացած պտուղը շատ ամուր կեղև ուներ, թեթև էր և պտղամիսը չորանալուց հետո հեշտությամբ մաքրվում էր ու ծառայում որպես աման:

Հայոց տոներն ու դրանց հետ կապված ծիսական արարողություններն ակնկալում են կյանքի զարթոնք, արգասաբերություն, առատություն, խաղաղություն և բարեկեցություն: Ծիսական բազմաբնույթ արարողություններում օգտագործվել են նաև տարբեր հեղուկներ՝ ջուր, ձեթ, կաթ, քաղցու, գինի և այլն: Գինին հնուց ի վեր, որպես աշխարհիկ և հոգևոր հանդեսների ծիսական խմիչք, կարևորագույն նշանակություն է ունեցել հասարակական և ընտանեկան արարողությունների ժամանակ: Ծիսակատարությունների ընթացքում գինի է հեղվել, որն աստվածներին և ննջեցյալների հոգիներին անարյուն զոհ մատուցելու խորհուրդ ուներ: Թերևս սա է պատճառը, որ դեռևս հնագույն ժամանակներից (առնվազն էնեոլիթից կամ պղինձնադարի դարից) գինին նույնացվում էր արյան հետ: Խաղողի և գինու ծիսական և պաշտամունքային բնույթի մասին են խոսում Հայաստանի հնագիտական հուշարձաններից հայտնաբերված հարյուրավոր իրերը՝ պերճանքի առարկաներն ու զարդերը, հեղման անոթներն ու ծիսական սպասքը, կնիքներն ու դրամները: Թաղման ծեսում գինու հեղմանը վերաբերող հետաքրքիր փաստեր են արձանագրվել բրոնզ-երկաթեդարյան և անտիկ դարաշրջանների բազմաթիվ դամբարաններում: Այս հնավանդ սովորությունը պահպանվում է նաև մեր ժամանակներում: Միակ և կարևորագույն փոփոխությունը վերաբերում է հեղվող խմիչքին, քանի որ ավանդական գինու փոխարեն նաև օղի են հեղում:

Հայ բանահյուսությունը հարուստ նյութեր է պարունակում մեր ժողովրդի տնտեսական զբաղմունքների, արհեստների, կենցաղի ամենատարբեր բնագավառների, այդ թվում նաև այգու, խաղողի և գինու վերաբերյալ: Դրա վկայությունն են պահպանված բազմաթիվ հեքիաթները, առակները, ասացվածքները, խաղիկները, հանելուկներն ու բանաստեղծությունները:

Գինին հայկական խնջույքների զարդն էր: Հարսանիքների համար նախապես գինի էր պատրաստվում, որը չափավոր քանակությամբ մատուցվում էր միայն հասուն տղամարդկանց: Հանդիսավոր և ծիսական կերուխումները մինչ օրս ուղեկցվում են գինու բաժակով կենացներ ասելու հնավանդ սովորությամբ: Հատուկ խումբ են կազմում համայնական ու հասարակական բնույթի հացկերությունների ու խնջույքների կենաց-մաղթանքները: Դրանք խստորեն համապատասխանում են ընտանեկան հանդիսավոր արարողության բնույթին՝ հարսանիք, ծնունդ և կնունք, մահ և թաղում:

Քրիստոնեություն ընդունելուց հետո խաղողն ու գինին շարունակեցին պահպանել իրենց խորհրդանշական իմաստն ինչպես կենցաղում, այնպես էլ ծիսական արարողություններում: Հնագույն հավատալիքները շարունակվեցին սրբագործվել, հետևաբար Աստվածածնի վերափոխման տոնը նույնացվեց խաղողօրհնեքի հետ, որից հետո էր թույլատրվում խաղող ուտել, ինչպես նաև գինի պատրաստել:

Արդեն վաղ միջնադարից Քրիստոսի՝ որպես ուղիղ որթի ու խաղող-ողկույզի ընկալումը սերտորեն կապվում է նաև խաչելության և խաչի հետ: Խաչը նույնացվում էր Քրիստոս-որթի հետ և հանդես գալիս որպես կենաց ծառ, որը կազմակերպում է ողջ տիեզերքը: Գինին նույնացվում էր աստվածային արյան հետ, ընկալվում որպես սրբազան խմիչք՝ դրանով իսկ ձեռք բերելով մահը հաղթահարելու գործառույթ: IV դ. սկզբին քրիստոնեությունն ընդունելուց հետո խաղողի և նռան մոտիվները դարձան նորընծա կրոնի խորհրդանշանների և գաղափարաբանության օրգանական մասերից՝ տեղ գտնելով հոգևոր կառույցների հարդարանքներում: Կատարումով առավել շքեղ ու արտահայտչական են Թալինի, Զվարթնոցի և Վանա լճի Աղթամար կղզու ս. Խաչ տաճարի զարդագոտիները:

Գինու բարեմասնություններին զուգընթաց՝ հայկական մատենագրական աղբյուրները լի են գինու չարաշահման ու դրա բացասական հետևանքների նկարագրություններով: Հին հայերենը հարուստ է հարբեցողություն ու գինեսիրություն արտահայտող բառերով:

Հայոց մեջ գինու արտադրության երկրորդական մթերքներից նաև օղի են թորել: Հայաստանի այգեգործական շրջաններում օղի թորելու հումքը գինու արտադրության մնացորդներն էին, խաղողի տրորված զանգվածը՝ կնճեռը, կիսափչացած գինիները, գինու նստվածքը, թութն ու այլ մրգերը:

Սկսած XIX դ. երկրորդ կեսից և հատկապես XX դ. սկզբին, օղու արտադրությունը որոշակի տնտեսական նշանակություն է ստանում: Սկզբնական շրջանում օղու արտադրության հիմնական հումքը խաղողն էր, որն Արարատյան դաշտում այդպիսին էլ մնում է մինչև օրս:

Արարատյան դաշտում, Նախիջևանում, Արցախում, Արագածոտնում և այգեգործական մյուս վայրերում օղի թորում էին այգիներում և բնակավայրերի մերձակա գետակների ու աղբյուրների մոտ: Արցախում, Սյունիքում, Տավուշում և Լոռիում խաղողից և տարբեր մրգերից մինչև 60° թնդության օղիներ էին ստանում՝ հումքը գտելով երկու անգամ: Տնտեսական շահավետությամբ և արդյունավետությամբ պետք է բացատրել այն, որ օղու արտադրությամբ զբաղվել են նաև Էջմիածնի վանական տնտեսությունում:

Խաղողի որթը մեծ տեղ է ունեցել հայոց ուտեստի համակարգում, կիրառվել են որթի մատղաշ ընձյուղները, տերևը և պտուղները: Խաղողի որոշ տեսակներ հնարավոր էր երկար ժամանակ, նույնիսկ մինչև նոր բերքը պահել: Ավանդաբար խաղողը պահում էին հիմնականում տոնական սեղանների համար, որպես հարգի միրգ մատուցում էին հատուկ հյուրասիրությունների, խնամախոսության և այլ հանդիսությունների ժամանակ: Խաղողից չամիչ պատրաստում էին բերքահավաքից անմիջապես հետո, հատկապես որակյալ չամիչ էր ստացվում անկորիզ Նազելի տեսակից:

Խաղողի քաղցուից պատրաստված դոշաբը հայոց ուտեստի համակարգում քաղցրի հիմնական աղբյուրներից էր և ձմռան պաշարի կարևոր բաղադրիչ, որը պասեռի ժամանակ գործածելի մթերք էր: Այն նաև հումք էր զանազան քաղցրավենիքներ՝ հալվա, փոխինձ, խմորեղեններ, շաքոցներ, պաստեղ (լավաշ), ինչպես նաև օշարակներ

պատրաստելու համար: Մինչև շաքարի զանգվածային կիրառությունը (XX դ. սկիզբ) մրգերով ու բանջարեղեններով պահածոյացվող անուշներն ու մուրաբաները եփում էին դռշաբով կամ խաղողի քաղցուով:

Խաղողի որթի, պտղի, ինչպես նաև դրանից ստացվող քաղցուի, դռշաբի, չամչի, քացախի, հատկապես գինու բուժիչ ազդեցությունը մարդը բացահայտել է դեռևս հնագույն ժամանակներում: Գինու բուժիչ հատկությունները հայտնի էին դեռևս վաղագույն հասարակություններին, որոնք նկատել էին, որ գինին խթանում է մարսողությունը, բարձրացնում դիմադրողականությունը, կանխում վարակներն ու համաճարակները: Այս հանգամանքը հավանաբար պայմանավորված էր այն իրողությամբ, որ բնական խմորման շնորհիվ գինու մեջ առաջացող ալկոհոլը ոչնչացնում է բազմաթիվ հիվանդաբեր բակտերիաներ: Միջնադարյան հայ բժշկապետները մեծ տեղ են հատկացրել խաղողի որթով, պտուղներով, չամիչով և հատկապես գինով պատրաստված դեղամիջոցներին, որոնք մեծ կիրառություն են ունեցել նաև ժողովրդական բժշկության մեջ:

SUMMARY

Remains of wild and cultivated grapes, wine-producing facilities found at archaeological sites of the Armenian Highlands and the adjacent territories confirm the existence of an ancient cradle of grape domestication and origin of wine-making here. Armenia is one of the oldest horticultural countries: in some of its regions, in particular, in fertile valleys of Euphrates, Tigris and Araxes rivers, gardening has been practised since at least the Chalcolithic period – from the end of the V millennium B.C.

Diversity of Armenian economic and spiritual life is due to the clearly defined zoning of the country's relief. There are three natural landscape development zones in Armenia: plains (lowlands), foothills (middle) and mountains (highlands). Due to geographical conditions, the vertical zonality established the entire development process of the country's economy and culture. Mainly the lowlands and foothills were favourable for viticulture.

Grapevine grows almost everywhere in Armenia; wild grapes, embracing the trees or climbing the rocks, still can be seen in Artsakh, Syunik, Vayots Dzor, Lori, Tavush and other places.

The climatic conditions of the Armenian Highlands and the presence of wild grapes promoted the formation and development of viticulture and wine-making, as evidenced by nearly 500 indigenous varieties that originated in the territory of the country. They have very high-quality characteristics, and their biological features are typical of this place.

Grape bush in Armenian is known by several names: «vort», «vortatunk», «vaz», «khaghoghe-ni», «movrashuk», «aghogh» (grapevine, vine clipping, grape bush). The word «aygi» (garden) in Armenian in the modern sense of the word means a land plot, planted with grapevines and fruit trees, however, the original meaning of the word was definitely just vineyard. There are over hundreds of unique terms related to garden and gardening («vort» – grapevine, «sorek» – black grape variety, «khaghogh» – grapes, «hndzan» – winepress) even in the Bible – the first book in the Armenian language. There are many place names with the word «garden» and with dialectal roots of this word in different regions of historical Armenia.

In the cuneiform inscriptions of the era of the Van Kingdom, the creation of vineyards, construction of wine cellars and other economic activities are mentioned. Creation of a powerful irrigation network and artificial reservoirs refers to this period of Armenian history. In VIII century B.C., during the reign of the king Argishti I, viticulture became one of the most important branches of the country's economy.

The ancient cities of Armenia: Van, Yervandakert, Armavir, Artashat, Tigranakert, Dvin and Vagharshapat were surrounded by agricultural areas, including gardens with winepresses. The presence of a horticultural zone was one of the most important features of the Armenian city. This was typical of all societies in this region, especially for the era of the Van Kingdom and the Hellenistic period, becoming a key element of ethnic identity. Interesting evidence of this has been maintained in the works of Herodotus, Xenophon and Strabo.

Development of viticulture and wine-making in Armenia also made significant progress in the Middle Ages, as evidenced by archaeological excavations and written sources. There is plenty of evidence about the gardens, winepresses and wine in the works of Armenian historians and epigraphic inscriptions.

The Armenian Church played an important role in the development of this economic branch. Almost all monasteries and famous churches had gardens and winepresses.

The raids and conquests of various nomadic tribes had a devastating effect on this traditional branch of the Armenian economy, as a result of which the gardens were also destroyed and abandoned. The Muslim conquests and their religious taboos were especially destructive; as a result, the area of vineyards was also greatly reduced.

Traditionally in Armenia, there were several ways to plant grapevines and to form a garden. Most of the gardens were cultivated using the mound-based technique, in Artsakh, Tavush and Lori vines embracing trees and on supports were common (climbing technique), and in Meghri – also by trellising technique. The mound-based technique was fully adapted to the natural-historical and economic conditions of our country and had several significant advantages over the trellising technique since saving, and rational use of water were very important especially in the conditions of low-water Armenia.

Vineyards require careful maintenance from early spring to late autumn. In the Ararat Valley and the foothill zone, the first thing to do in spring was to open (dig out) the vines. The opening of the vineyard was followed by spring pruning (cutting), which was the most important way of regulating the ratio of the grapevine yield to its growth. Grape cutting was a responsible job; the cutter had to be an experienced gardener. After cutting the vineyard was spaded up and loosened. Spading up of a vineyard was one of the mandatory maintenance tasks since water and air penetrate better into the loosened soil, more moisture is retained, weed roots are destroyed.

